ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«06» 09 2021թ.
ՊԷ/510-Գ/14710

**«Հետք» թերթի լրագրող**
**Ա. Միրզոյանին**

**Հարգելի՛ պարոն Միրզոյան,**

ՀՀ պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել է զինծառայող Արթուր Նալբանդյանի և վարորդ Արամայիս Տոռոզյանի գերեվարվելու մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ Ձեր 23.08.2021թ. գրությունը:

Ի պատասխան Ձեր հարցադրումների հայտնում եմ.

1. Ս.թ. հուլիսի 13-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, մարտական դիրքերին սնունդ բաժանելիս մայոր Արթուր Հայկի Նալբանդյանը և բանվոր-ծառայող Արամայիս Հրանտի Տոռոզյանը (ծնված 1963թ.) մառախուղի պատճառով մոլորվել են Իշխանասար լեռան շրջանում:

2. Ս.թ. հուլիսի 14-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, մայոր Ա. Նալբանդյանը բջջային հեռախոսով կապ է հաստատել և հայտնել, որ մառախուղի պատճառով մոլորվել են ու հայտնվել հակառակորդի տարածքում:

3. Փաստի մասին հաղորդվել է ՌԴ խաղաղապահ զորքերի հերթապահին:

4. Մայոր Արթուր Հայկի Նալբանդյանը հաշվառված է ՊՆ Զ և ԶՀ ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանումում, իսկ Արամայիս Հրանտի Տոռոզյանը՝ Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանումում:

Միաժամանակ հայտնում եմ, որ 3-ից 6-րդ հարցերի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղեկատվություն չկա:

**Հարգանքով՝**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN ARTUR 3003790080

**Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ.՝ Ն. Բաղդանյան
Հեռ.՝ 010 29-44-07

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 44 39, ՖԱՔՍ՝ (+374 10) 66 32 34